կոչուէին երկնից արքայութեան. այս խօսքերէն զայրացան Նազարէթցիները «և յարուցեալ հանին զնա արտաքոյ քաղաքին, և ածին զնա մինչև յարտևան լերինն՝ յորոյ վերայ քաղաքն նոցա շինեալ էր, գահավէժ առնել զնա։ Եւ նա անցեալ ընդ մէջ նոցա՝ գնայր»։ Իր գաւառին անունով Յիսուս կը կոչուէր «Նազարէթի Մարգարէն» և կը յորջորջէին զԱնիկա «Նազովրեցի» և Փրկչին խաչելութեան տախտակին վրայ Պիղատոս գրեց «Յիսուս Նազովրեցի՝ Թագաւոր Հրէից»։ Աւետարանական այս պատմուածքներէն կը հասկցուի որ մեր Տէրը երեսուն տարի Նազարէթի մէջ ապրած, սնած ու աճած էր իմաստութեամբ և՝ հասակաւ, և անկէ սկսաւ իր քարոզութիւնները։ Նազարէթ քաղաքին Յիսուսի կեանքին և Մարգեղութեան խորհուրդին հետ այս սերտ կապակցութիւնը քրիստոնեաներուն ներշնչած էր բարեպաշտական զգացումներ՝ որոնցմով անոնք փափաքած են յաւերժացնել Յիսուսի յիշատակները նոյն քաղաքին մէջ՝ հաստատութիւնով զանազան յիշատակարաններու՝ որոնք դարէ դար մերթ պայծառ ու շքեղ և մերթ յարձակումներու հետևանքով անշուք կամ աւերեալ կը մնային, ինչպէս ցոյց կու տայ պատմութիւնը։ Քրիստոսի տնօրինական գործերը առաւելապէս տեղի ունեցան երեք քաղաքներու մէջ, որոնք են Երուսաղէմ, Բեթղեհէմ և Նազարէթ։ Վերջինս հակառակ իր տեղագրական ու պատմական անշքութեան և Քրիստոսի քարոզութեան առթիւ տեղւոյն ժողովրդեան դաժան վարմունքին՝ եղաւ, ըստ Յերոնիմոսի, «Գալիլիոյ ծաղիկը» ինչպէս կը գրէ ան իր նամակներէն միոյն մէջ։ Ուրիշ լատին մատենագիր մը Նազարէթ անունին նըկատմամբ ունի գեղեցիկ պատկերաւոր խօսք մը. «ինչպէս որ, կ'ըսէ, վարդը զինքը շրջապատող ծաղիկներով կը գեղեցկանայ, նոյնպէս Նազարէթը վարդի մը կլորակ ձևը ունենալով կարծես թէ շրջապատող և զինքը զարդարող լեռները կը թուին ըլլալ վարդին տերևները»։

Նազարէթի նկատմամբ Աւետարանի այս պատմուածքներէն վերջ, թէև մեր նիւթէն դուրս, բայց պատմական կարևորութեան և շահեկանութեան համար կ'ուզենք հակիրճ տողերով նկարագրել բուն իսկ քաղաքին ընդհանուր քրիստոնէութեան վերաբերեալ մեծ սրբավայրերը, յետոյ պատմագրել քաղաքէն դուրս շատ կանուխէն Գահավիժման լերան գագաթը շինուած հայոց վանքը։